

ՇԱՐԱՀԱՍՈՒԹՅԱՆ ԴԵՐՈՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՄԱՆ ՄՅՈՒՄ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՇԱՐՔՈՒՄ

Շարադասություն եզրը հայերենում ենթադրում է ոչ միայն բառերի պարզ հերթագայություն, այլ նաև նախադասության անդամների շարադասություն: Անգլերենում, ռուսերենում, գերմաներենում՝ շարադասություն բառին համարժեք word order, порядок слов և Wortordnung տերմիններն որոշակի խնդիր են առաջացնում, ինչն, իհարկե, չի վրիպել մի շարք լեզվաբանների ուշադրությունից: «Նախադասություններում բառերի կարգ եզրը ակնհայտորեն սխալ է, սակայն բոլորը կարծես համակերպվել են դրա հետ, թեև բոլորն էլ հասկանում են, որ կարգավորվում են ոչ թե բառերը, այլ նախադասության անդամները, և ավելի ճիշտ կլիներ ասել նախադասության անդամների կարգ»:¹ Արդյունքում, հայերեն եզրը հաղորդում է շարադասության առավել ընդհանուր, ամբողջական բնույթը և չի սահմանափակում ուսումնասիրության առարկան, ինչպես՝ անգլերենում, ռուսերենում և գերմաներենում:

Շարադասության վերաբերյալ կատարվող ուսումնասիրությունները հատկապես զարգացան 20-րդ դարում, երբ մի շարք լեզվաբաններ շարահյուսությունն սկսեցին դիտել իբրև առանձին լեզվաստիճան և այդ շրջանակներում հետազոտել նաև շարադասությունը իբրև շարահյուսության կարևորագույն տարրերից մեկը: Բայց ինչպես նկատել է ֆրանսիացի լեզվաբան Լ. Տենիերը «Շարահյուսությունը վերջին 100 տարում հանդես է եկել ձևաբանության աղքատ բարեկամի դերով»² և շարահյուսության գրեթե բոլոր բնորոշումները հարմարեցվել են ձևաբանությանը: Ըստ նույնի, չի կարելի ժխտել, որ ձևաբանությունը և շարահյուսությունը փոխկապակցված են, բայց չի կարելի գերազնահատել մեկի դերն ու նշանակությունը մյուսին թերազնահատելու գնով:

Սույն հոդվածի նպատակն է պարզել շարադասության տեղը նախադասության կապակցման միջոցների շարքում և դրանով իսկ պարզել շարադասության ունեցած դերն ու նշանակությունը անգլերենում և հայերենում:

Շարադասությունը, լինելով շարահյուսության տարր, հաճախ ուսումնասիրվում է ձևաբանության տեսանկյունից: Սրա վկայությունը շարադասությանը հաճախ տրվող հետևյալ բնորոշումն է. «Շարադասությունը լինում է

¹ Холодович А.А. К типологии порядка слов // Ф/Н, М., 1996, N3

² Л. Теньер Основы структурного синтаксиса, М., 1988

կայուն և ազատ: Ամջատական լեզուներն ունեն կայուն շարադասություն: Կցական և թեքական լեզուներն ունեն ազատ շարադասություն»:³ Ինչպես հայտնի է, լեզուները դասակարգվում են իբրև ամջատական, կցական կամ թեքական համաձայն իրենց ձևաբանական հատկանիշների, ուստի այս դեպքում էլ շարահյուսական երևույթը բացատրվում է ձևաբանական հատկանիշներով:

Լեզվաբանների մեծ մասը շարադասությունը հնչերանգի հետ միասին դիտում է իբրև նախադասության անդամների կապակցման միջոց՝ սրան զուգահեռ տարբերակելով նաև կապակցման եղանակներ, որոնք են կառավարումը, համաձայնությունը, առդրությունը, շարահարումը և այլն: «Միջոց ասելով՝ նկատի ունենք լեզվական-քերականական այն ձևերը, լեզվական միջոցները, որոնք ստեղծում են կապակցություն, որոնցով բառերը կապակցվում են միմյանց»:⁴

Նախ նշենք, որ ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանում եղանակ և միջոց բառերը նշվում են իբրև հոմանիշներ: Բացի այս, կապակցման միջոց ասելով՝ հասկանում ենք նախադասության անդամների կապակցման ժամանակ ձևաբանական վերջավորությունների առկայությունը կամ բացակայությունը: Բացակայություն ասելով՝ շատ լեզվաբաններ նկատի ունեն հենց շարադասությունը: «Կապակցությունը կարող է իրագործվել նաև առանց կապակցման բառերի ու մասնիկների, առանց բառերի քերականորեն փոխված ձևերի, այլ զրո միջոցով կամ զրո ձևով և այս դեպքում վճռական դեր ունեն հնչերանգը և բառերի շարադասությունը»:⁵ Քերականորեն փոխված ձև ասելով՝ հասկանում ենք իռլովները և օժանդակ բառերը, որոնք ձևաբանության, և ոչ թե շարահյուսության ոլորտից են, ուստի մենք գտնում ենք, որ շարահյուսական մակարդակում միջոցը եղանակից առանձնացնելու կարիք չկա:

Բացի այդ, մենք համաձայն չենք նաև այն լեզվաբանների հետ, որոնք շարադասությունը դիտում են իբրև զրո միջոց: Յ.Ս. Հարությունյանը նշում է. «Կապակցության այս միջոցը (շարադասությունը) առկա է միայն առդրական պարագայական և որոշչային հարաբերություններում, որոնցով արտահայտվում է ստորադասությունը: Ջրո միջոցը գործում է նաև համադասական հարաբերություններում՝ այս դեպքում իբրև թվարկման հնչերանգ»:⁶ Այս դեպքում անհասկանալի են դառնում շարադասության մի շարք կիրառումներ: Հայտնի է, որ հայերենում բայը խնդրի հետ կապվում է կառավարման և

³ Ս. Վ. Գյուլբերգյան «Ժամանակակից հայերենի շարահյուսություն», Ե., 1988, էջ 263

⁴ Յ.Ս. Հարությունյան «Կառավարումը ժամանակակից հայերենում» Ե., 1983, էջ 60

⁵ Յ.Ս. Հարությունյան «Կառավարումը ժամանակակից հայերենում» Ե., 1983, էջ 61

⁶ Նույն տեղում, էջ 62

խնդրառության միջոցով, սակայն այն դեպքում, երբ ենթական և ուղիղ խնդիրը ձևով համընկնում են և նրանց գործառույթը նախադասության մեջ պայմանավորված է միայն շարադասությամբ: Ի՞նչ միջոցով են նրանք կապակցված:

Ինչպես գրում է Ե.Ի. Շենդելը. «Շարադասությունը շարահյուսական կապակցման միջոցներից մեկն է և պետք է ուսումնասիրվի շարահյուսական միջոցների ընդհանուր համակարգում»:⁷ Այս թեզիսը Ե. Ի. Շենդելը առաջադրել է գերմաներենի համար, սակայն մենք գտնում ենք, որ այն ունի ընդհանուր տեսական նշանակություն և կարող է կիրառվել նաև այլ լեզուների, այդ թվում և անգլերենի ու հայերենի շարահյուսական կապակցման միջոցներն ուսումնասիրելիս: *Այսպիսով, մենք շարադասությունը դիտում ենք ոչ թե իբրև առանձին մեկուսացած երևույթ, այլ քննարկում ենք նախադասության կապակցման միջոցների ընդհանուր համակարգում:*

Ե.Ի. Շենդելսն իր հոդվածում հնդեվրոպական լեզուների, և մասնավորապես գերմաներենի համար տարբերակում է վեց կապակցման միջոց, որոնք են՝ առդրությունը (примыкание), կառավարումը (управление), համաձայնեցումը (согласование), հարադրումը (замыкание), շարադասությունը (порядок слов) և հնչերանգը (интонация): Անգլերենում և հայերենում կապակցման միջոցների կիրառումը տարբերվում է և սրանով է պայմանավորված անգլերենի համեմատաբար՝ կայուն և հայերենի համեմատաբար ազատ շարադասությունը: Ասում ենք համեմատաբար ազատ, քանի որ հայերենում նախադասության անդամները չեն կարող ունենալ ցանկացած պատահական դասավորություն, և համեմատաբար կայուն, քանի որ անգլերենում նախադասության անդամների դիրքը որոշ գործոնների ազդեցությամբ կարող է փոփոխվել:

Պատմական զարգացումների արդյունքում ժամանակակից անգլերենը պահպանել է նախադասության կապակցման միջոցներից միայն մի քանիսը, որոնցից գլխավորը շարադասությունն է: Ժամանակակից անգլերենում կան նաև համաձայնեցման և կառավարման միջոցները, բայց նրանց կիրառումը սահմանափակ է:

Անգլերենում համաձայնումը կիրառվում է մեծ մասամբ ենթակայի և ստորոգյալի (հազվադեպ որոշչի և որոշյալի) պարագայում, սակայն ոչ բոլոր ժամանակածների դեպքում է հնարավոր կիրառել համաձայնման միջոցը, ուստի այն հանդես է գալիս իբրև կապակցման հավելյալ միջոց: Ինչպես նշում է Ե.Ի. Շենդելը, «նախադասության անդամները միմյանց հետ կարող են կապակցվել ոչ թե մեկ, այլ մի քանի եղանակով, սակայն այդ եղանակներից

⁷ Е.И. Шендельс. Порядок слов в главном предложении в современном немецком языке. Ин. яз. в школе, М., 1948, №6

մելը լինում է հիմնական, իսկ մյուսները՝ հավելյալ»⁸։ Տվյալ դեպքում ենթակայի և ստորոգյալի կապակցման հիմնական միջոցը շարադասությունն է, իսկ հավելյալ միջոցը՝ համաձայնումը :

Օրինակ համաձայնումը գործում է երրորդ դեմքով, եզակի թվով ենթակայի և ներկա ժամանակով կիրառված ստորոգյալի միջև: Սակայն այն փաստը, որ համաձայնեցված ենթական և ստորոգյալը ոճականորեն չեզոք նախադասություններում ունեն կայուն դիրք և նրանց տեղափոխումը կարող է հանգեցնել մտքի խճողման կամ խոսքին հաղորդել ոճական նրբերանգ, ապացուցում է, որ անգլերենում ենթակայի և ստորոգյալի կապակցման հիմնական միջոցը շարադասությունն է, իսկ համաձայնումը հանդես է գալիս իբրև հավելյալ միջոց:

Այլ է պատկերը հայերենում, որտեղ համաձայնությունը հանդես է գալիս իբրև ենթակայի և ստորոգյալի կապակցման հիմնական միջոց: Սա ապացուցվում է այն փաստով, որ, ելնելով խոսողի հաղորդակցման նպատակից, ենթական և ստորոգյալը միմյանց նկատմամբ կարող են ունենալ տարբեր դիրքեր, ինչը սակայն չի հանգեցնում իմաստային խճողման:

Նա հասկացավ գործի լրջությունը:

Նա գործի լրջությունը հասկացավ:

Գործի լրջությունը նա հասկացավ:

Գործի լրջությունը հասկացավ նա:

Այս բոլոր նախադասությունները, ըստ էության, քերականորեն միևնույն նախադասության տարբերակներն են, իսկ շարադասական տարբերությունների նպատակը խոսքին ոճական արժեք հաղորդելն է:

Ուստի, եթե ոճականորեն չնշույթավորված նախադասություններում ենթակայի և ստորոգյալի կապակցման հիմնական և միակ միջոցը համաձայնումն է, ապա ոճականորեն նշույթավորված նախադասություններում ենթակայի և ստորոգյալի շարադասական փոփոխությունների՝ շրջադասությունների միջոցով ստանում ենք էմֆատիկ կառույցներ:

Կառավարումը կամ խնդրառությունը ժամանակակից անգլերենում բացակայում է, ինչի պատճառը հոլովական համակարգի բացակայությունն է: Ինչպես գրում է Զ.Ս.Չարությունյանը «Կառավարող բառի բառաքերականական հատկանիշներով պամանավորված՝ կառավարվողը դրվում է որևէ հոլովով կամ՝ կապով և հոլովով, ըստ որի տարբերակվում են կառավարման երկու տեսակ՝ անմիջական և ոչ անմիջական»⁹։ Անգլերենում հոլովական համակարգի բացակայության հետևանքով կառավարումն իբրև կապակցման եղանակ չի

⁸ Е. И. Шендельс. Порядок слов в главном предложении в современном немецком языке. Ин. яз. в школе, М., 1948, №6

⁹ Զ.Ս.Չարությունյան «Կառավարումը ժամանակակից հայերենում», Ե., 1983, էջ 63

կիրառվում: Ինչպես նշում է Ա.Ի. Սմիրնիցկին¹⁰, կառավարման հարցն անգլերենում առաջանում է կապված նախդիրների հետ: Ինչպես արդեն նշվեց, խնդրառությունը լինում է անմիջական և ոչ անմիջական: Ոչ անմիջական կառավարման դեպքում կառավարումն արտահայտվում է կապի և հոլովի միջոցով, սակայն անգլերենում առկա է այս երկանդամի հիմնականում միայն առաջին անդամը՝ կապը, որը պատմական զարգացումների ընթացքում ստանձնել է նաև հոլովական վերջավորությունների դերը և ժամանակակից անգլերենում կապի միջոցով արտահայտվում է հայերենի կապ + հոլովական վերջավորություն երկանդամի իմաստը:

Ես խոսում եմ Արամի հետ:

I am speaking to Aram.

Այսինքն, անգլերենում այն հարաբերությունները, որոնք պետք է արտահայտվեին խնդրառությամբ, իրականացվում են շարադասության միջոցով:

Հայերենում խնդրառությամբ ստորոգյալը կապվում է զանազան խնդիրների հետ, սակայն այստեղ էլ շարադասությունը որոշակի դեր ունի: Եթե խնդիրը դրված է ուղղական կամ հայցական հոլովով և ձևով համընկնում է ենթակայի հետ, ապա նրանց դիրքը որոշվում է շարադասությամբ: *Ուստի խնդրառության դեպքում նույնպես շարադասությունը հանդես է գալիս իբրև հավելյալ կապակցման միջոց:*

Ինչպես արդեն նշել ենք, Ե.Ի. Շենդելսը նշում է նաև առդրությունը իբրև կապակցման միջոց: Սակայն մենք գտնում ենք, որ եթե շարադասությունը դիտվում է իբրև կապակցման միջոց, ապա այն իրականացնում է նաև առդրության գործառույթը: Առդրության մասին Հ.Ջ. Պետրոսյանը գրում է. «Առդրությունը նախադասության անդամների ստորադասական կապակցության եղանակ է, երբ ստորադաս անդամը գերադասի հարաբերակցության մեջ մնում է անփոփոխ. կարևորը այս կապակցության մեջ իմաստային կապն է, շարադասությունը և հնչերանգը»:¹¹ Իսկ Օ.Ս. Ախմանովան լեզվաբանական տերմինների բառարանում առդրությանը տալիս է հետևյալ բնորոշումը. «Առդրությունը շարահյուսական կապի միջոց է, որի դեպքում մի տարրի կախվածությունը մյուսից արտահայտվում է միայն դիրքով, այսինքն առանց օժանդակ բառերի և ձևաբանական փոփոխությունների»:¹² *Այստեղից կարելի է եզրակացնել, որ շարադասությունը լիովին իրականացնում է առդրության*

¹⁰ Смирницкий А.И. Синтаксис английского языка, М. 1957

¹¹ Հ.Ջ. Պետրոսյան «Հայերենագիտական բառարան» Ե., 1987, էջ 50

¹² О. С. Ахманова "Словарь лингвистических терминов"

գործառույթը և առդրությունը իբրև կապակցման միջոց դուրս է մնում շարահյուսական կապակցման միջոցների շարքից:

Ինչու՞ ենք նախընտրում շարադասություն տերմինը: Խնդիրն այն է, որ ինչպես արդեն նշվեց, միևնույն կապն արտահայտելիս հնարավոր է մեկից ավելի միջոցների կիրառում, ընդ որում, մեկը հիմնական է, իսկ մյուսը կամ մյուսները՝ հավելյալ: Հայերենում շարադասությունը շատ դեպքերում հանդես է գալիս իբրև հավելյալ կապակցման միջոց և միայն որոշ դեպքերում իբրև հիմնական միջոց: Այն դեպքերում, երբ շարադասությունը հավելյալ միջոց է, առդրություն չկա:

Իսկ այնպիսի լեզուներում, որտեղ շարադասությունը մեծ մասամբ հանդես է գալիս իբրև կապակցման հիմնական միջոց, վերոհիշյալ պնդումն ավելի ակնհայտ է դառնում: Օրինակ անգլերենում, ինչպես արդեն նշվեց, շարադասությունը ենթակայի և ստորոգյալի կապակցման հիմնական միջոցն է, սակայն այս դեպքում նրանք չեն կապվում առդրությամբ, քանի որ, ինչպես հայտնի է, առդրությամբ կապվում են որոշիչները և պարագայական կառույցները:

Ինչ վերաբերում է հարադրմանը, ապա, ըստ էության, այս կապակցման միջոցը մեծ մասամբ քնորոշ է գերմաներենին, թեև որոշ լեզվաբաններ գտնում են, որ անգլերենի *հոդ + ածական + գոյական*¹³ նույնպես հարադրման արդյունք է: Հայերենում նման երևույթ չի հանդիպում:

Այսպիսով կարելի է հանգել հետևյալ եզրակացության.

1. Շարադասությունն անգլերենում համեմատաբար կայուն է, քանի որ նրա գործառույթն իբրև նախադասության կապակցման միջոց անգլերենում շատ ավելի նշանակալի է, քան հայերենում: Այս եզրակացությամբ լուծվում է Լ.Տենյերի առաջադրած խնդիրներից մեկը, այսինքն շարահյուսության խնդիրը լուծվում է հենց շարահյուսությամբ. շարադասությունն անգլերենում կայուն է, քանի որ այն նախադասության անդամների կապակցության հիմնական միջոցն է:

2. Հայերենում շարադասությունը համեմատաբար ազատ է, քանի որ շարադասության կողքին կան նաև նախադասության կապակցման այլ միջոցներ, որոնք շարադասությանը զուգահեռ իրականացնում են նախադասության անդամների կապակցման գործառույթը:

¹³ И. И. Мещанинов "Члены предложения и части речи", Л., 1978, стр. 61